

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ «Կոնվերս Միավորներ» Պարզևային Ծրագիր Ընդհանուր պայմաններ

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ կողմից իրականացվող «Կոնվերս Միավորներ Պարզևային Ծրագիրը» (այսուհետ՝ Ծրագիր) հնարավորություն է տալիս Ծրագրի մասնակիցներին վաստակել միավորներ (այսուհետ՝ Կոնվերս միավոր/Միավոր/ԿՄ), որոնք կարող են փոխանակվել որոշակի պարգևների, օրինակ՝ ապրանքների, նվեր-քարտի, ինչպես նաև ծառայությունների հետ: Ծրագիրը նախաձեռնվում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ (այսուհետ նաև՝ «Կոնվերս Բանկ», «Բանկ», «Մենք», «Մեր») կողմից: Սույն պայմաններում «Դուք», «Ձեր» և «Ձեզ» բառերն օգտագործվում են Առաջնային քարտատերերին հղում կատարելու համար:

Ուշադիր կարդացեք Պայմանները և պահպանեք դրանք, քանի որ հետագայում կարող եք հղում կատարել դրանց: Սույն Պայմանները կիրառվում են Ծրագրի շրջանակներում, եթե չկա այլ գրավոր պայմանավորվածություն կամ Բանկի կողմից ծանուցում: Ծրագրի գործողությունը տարածվում է Կոնվերս Բանկի կողմից տրամադրված Ձեր Քարտի նկատմամբ: Սույն Պայմանները գործում են Ծրագրի գործողության ողջ ընթացքում:

«Վճարային քարտի տրամադրման և օգտագործման» պայմանագրում՝ որը կնքվել է Մեր և Ձեր միջև, օգտագործված սահմանումները կիրառվում են նաև սույն Պայմանների նկատմամբ: Բացի այդ սույն Պայմաններում որոշ բառեր նշված են մեծատառերով՝ դրանց հատուկ իմաստն ընդգծելու համար: Դրանց սահմանումները ներկայացված են ստորև՝

Հաշիվ՝ Կոնվերս Բանկում բացված Ձեր Քարտային հաշիվը:

«Վճարային քարտի տրամադրման և օգտագործման» պայմանագիր /այսուհետ նաև՝ «Պայմանագիր»/՝ Կոնվերս Բանկի և Ձեր միջև կնքված պայմանագիր, որի հիման վրա մենք Ձեզ տրամադրել ենք Քարտ և վարում ենք Ձեր Քարտային հաշիվը:

Կուտակման գործակից՝ Ծրագրին մասնակցող Քարտի համար կիրառելի Միավորների կուտակման գործակից, ներառյալ՝ բազային կուտակումը (յուրաքանչյուր 1,000.00 ՀՀ դրամ արժողությամբ Ձուտ գնումների դիմաց շնորհվող մեկ Միավոր) և բոնուսային գործակից, որը կարող է առաջարկվել Ձեզ որոշակի դեպքերում:

Ապրանքներ՝ ավիատոմսեր, հանգստի փաթեթներ, հյուրանոցների, գնացքի տոմսերի, նյութական ապրանքների և Նվեր-քարտեր, եթե դրանք սահմանված են փոխարկման Բանկի կողմից և տրամադրվում են Ծրագրին մասնակից մատակարարների կողմից: Ապրանքների ցանկը ներկայացված է www.conversebank.am կայքում:

Կատալոգ՝ www.conversebank.am կայքում ներկայացված Ապրանքների, Ապրանքների մատակարանների և փոխանակման համար անհրաժեշտ Միավորների քանակի և պայմանների վերաբերյալ տեղեկատվություն պարունակող նյութ:

Ծրագրին մասնակից մատակարար՝ ընկերություն, որը Բանկի հետ կնքել է համագործակցության պայմանագիր, որի համաձայն Ծրագրին մասնակից մատակարարի Ապրանքները ենթակա են փոխանակման, այսինքն՝ Քարտապանը կարող է մարել Միավորները Ծրագրին մասնակից մատակարարների կողմից առաջարկված Ապրանքների փոխանակման միջոցով: Ծրագրին մասնակից մատակարարները ներկայացված են առցանց՝ www.conversebank.am կայքում՝ Կատալոգում:

Ձուտ գնումներ՝ տե՛ս սույն Պայմանների 3(ա) կետում առկա սահմանումը:

Կոնվերս Միավորներ/Միավորներ/ԿՄ՝ սույն Պայմանների համաձայն՝ Ձեր Միավոր Կուտակային Հաշվին Կուտակման գործակցի համաձայն մուտքագրված Միավորներ:

Առաջնային քարտատեր՝ Քարտ ստանալու համար դիմում ներկայացրած անձը, ում անունով մենք բացում ենք Հաշիվ, որը հնարավորություն ունի իր քարտին կից ստանալ հավելյալ քարտեր և ում հետ Բանկը կնքել է Պայմանագիր:

Փոխհատուցում/փոխարկում/փոխանակում/մարում՝ Ձեր ՄԿՀ-ում Միավորների մնացորդի հաշվին ԿՄ որոշակի քանակի փոխանակում Ապրանքով՝ Ծրագրի շրջանակներում, սույն Պայմանների 8-րդ կետի համաձայն:

Միավորների Կուտակման Հաշիվ /այսուհետ նաև՝ ՄԿՀ/ մեր կողմից Առաջնային քարտապանի անվամբ բացված հաշիվ՝ Ծրագրի շրջանակներում վաստակած Միավորները մուտքագրման և ելքագրման համար:

Հարկեր և այլ ծախսեր՝ գանձվող հարկերը և ծառայությունների դիմաց կատարվող վճարները, որոնք առաջանում են Միավորների փոխանակման արդյունքում:

Պայմաններ՝ Սույն ընդհանուր պայմանները, որոնք կանոնակարգում են Բանկի «Կոնվերս Միավորներ Պարգևային Ծրագիրը»:

www.conversebank.am՝ Բանկի պաշտոնական կայք, այսուհետ նաև՝ “Կայք”:

1. Կիրառելիություն

Ծրագիրն առաջարկվում է մեր նախաձեռնությամբ և տարածվում է Բանկի կողմից տրամադրված Քարտերի նկատմամբ՝ Ձեր Հաշվի դրական կարգավիճակի պայմանով: Ձեր Հաշիվն ունի դրական կարգավիճակ, եթե Դուք բավարարում եք Պայմանագրի բոլոր պահանջները, սույն Պայմանները և Ձեր կողմից օգտագործվող Բանկի այլ պրոդուկտներին առնչվող պայմանագրերի պայմանները և պահանջները և չունեք ժամկետանց որևիցե պարտավորություն Բանկի հանդեպ: Դուք չեք կարող վաստակել կամ փոխանակել Միավորներ, եթե խախտել եք այդ պայմաններն ու պահանջները, իսկ Ձեր Հաշիվը դիտարկվում է որպես բացասական կարգավիճակով Հաշիվ:

Ծրագրին չեն մասնակցում Բանկի կողմից թողարկված և տրամադրվող՝

- Պրեմիում դասի Ինֆինիտի տիպի քարտերի
- Նվեր Քարտերը
- Կորպորատիվ Քարտերը
- Ոսկու գրավով քարտերը (չի վերաբերվում այն վարկային քրատերին որոնց դեպքում Բանկը կայացրել է առանձին որոշում տրամադրել քարտը գրավային ապահովմամբ)
- Չվերականգնվող սահմանաչափով ցանկացած տիպի քարտ

ՄԿՀ բացվում է միայն ֆիզիկական անձանց համար՝ Առաջնային քարտատիրոջ անունով: Ծրագրին չեն մասնակցում իրավաբանական անձանց և անհատ ձեռներգների համար բացված քարտային հաշիվները:

2. ԿունվերսՄիավորներ

Ծրագիրն իրականացվում է միավորների համակարգով: Ծրագրի շրջանակներում շնորհված Միավորները չունեն կանխիկ արժեք և չեն կարող փոխանցվել այլ անձանց: ՄԿՀ վրա Միավորները հավաքվում են բացառապես Առաջնային Քարտապանի օգտին և ենթակա չեն տրոհման կամ փոխանցման այլ անձի:

3. Կունվերս Միավորների կուտակում

ա. Ձեր ՄԿՀ շնորհվում է մեկ ԿՄ՝ Ծրագրի գործողության ընթացքում Ձեր Հաշվից գանձած յուրաքանչյուր 1,000.00 ՀՀ դրամ արժողությամբ «Զուտ գնումներ» կատարելու դիմաց: ԿՄ շնորհման կարգը որոշ դեպքերում կարող է տարբեր լինել կախված որոշակի գործարքների առանձնահատկություններից, որի մասին տեղեկատվությունը գետեղված կլինի Բանկի պաշտոնական կայքում՝ www.conversebank.am: Սույն փաստաթղթի շրջանակներում, «Զուտ գնումներ» նշանակում է գնված ապրանքների և ծառայությունների դիմաց Ձեր Քարտի միջոցով վճարված գումարը, որոնք գանձվում են Հաշվից, բացառությամբ՝ այն ոչ կանխիկ (quasi-cash) գործառնությունների, որոնք ներառում են ուղղակի դեբետավորման համակարգով կատարված գնումները (օրինակ վճարումներ կոմունալ ծառայությունների դիմաց), ճանապարհային չեկերը, արտարժույթի փոխանակման գործարքները, վճարման հանձնարարականները, առկա պարտքի մարումները): Միավորներ չեն շնորհվում, այլընտրանքային ծառայությունների, Բանկի կողմից սահմանված միջնորդավճարների, գումարների, տոկոսների կամ տուժանքների գանձման, Հաշիվների միջև դրամային փոխանցումների դեպքում:

բ. Որոշ դեպքերում կարող են շնորհվել լրացուցիչ Միավորներ հատուկ առաջարկների համար կամ շնորհվել Ծրագրին մասնակից առևտրային կազմակերպությունների կամ ծառայություն մատուցողների կողմից: Ավելին, մենք ժամանակ առ ժամանակ կարող ենք առաջարկել բոնուսային Միավորներ՝ կախված Ձեր քարտի բարձր շրջանառությունից կամ ակտիվությունից: Այդ հատուկ առաջարկների, ներառյալ՝ բոնուսային Միավորների, տրամադրման սկզբունքները սահմանվում են՝ համաձայն Բանկի կողմից ընդհանուր պայմանների:

գ. Հաշվի բացասական կարգավիճակի դեպքում, Բանկի միակողմանի որոշմամբ Ձեր Հաշվի հանդեպ կկիրառվեն պատասխանատվության միջոցներ.

- ՄԿՀ վրա Միավորներ չեն շնորհվի, եթե Ձեր Հաշվի վրա առկա է ավելի քան 30-օրյա կետանցված պարտավորություն: Միավորները կարող են վերականգնվել նման պարտավորությունների մարման և 1,000.00 ՀՀ դրամ վճարի դիմաց,
- ՄԿՀ կնվազեցվի մնացորդի 50%-ի չափով, եթե Ձեր Հաշվի վրա առկա է ավելի քան 60-օրյա կետանցված պարտավորություն: Միավորները կարող են վերականգնվել նման պարտավորությունների մարման և 10000.00 ՀՀ դրամ վճարի դիմաց:

Ինչպես նաև ՄԿՀ վրա ԿՄ չեն շնորհվի եթե տվյալ ամսվա ընթացքում Զուտ գումարների ծավալը 50 000 ՀՀ դրամից պակաս է (հետևաբար նվազագույն շնորհված Միավորները՝ ամսական 50 ԿՄ է):

4. Կոնվերս Միավորների փոխանակում/մարում/

- ա. Դուք կարող եք տեղեկանալ Ձեր կողմից կուտակված ԿՄ փոխանակման հնարավոր տարբերակների և պայմանների մասին՝ այցելելով www.conversebank.am կայքը կամ զանգահարելով Կոնվերս Բանկի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ Բանկի մասնաճյուղ, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմաններում:
- բ. Միավորները հասանելի են փոխանակման /մարման/ միայն Հաշվի քաղվածքի ձևավորման օրվանից հետո՝ Բանկին դիմելու միջոցով: Դուք իրավունք ունեք փոխանակել/մարել/ Ձեր Միավորները Ծրագրի գործողության ընթացքում և միայն Ձեր Հաշվի դրական կարգավիճակի պայմանով. Բանկի կողմից սույն Պայմաններով սահմանված կարգով: Յուրաքանչյուր փոխանակվող Ապրանքի փոխարկման կարգը, առանձնահատկությունները և պայմանները ներկայացված են www.conversebank.am կայքում: Ծրագրի գործողության դադարեցման դեպքում Դուք կարող եք փոխանակել Ձեր Միավորները մեր կողմից սահմանված հետագա ժամկետում:
- գ. Եթե դիմել եք ԿՄ Ապրանքով փոխարկման համար, Ձեր ՄԿՀ-ից հանվում են ԿՄ այն քանակությունը, որը անհրաժեշտ է տվյալ Ապրանքի ստանալու համար: Մասնակի փոխանակում չի կատարվում: Մարված Միավորները չեն վերականգնվում կամ փոխհատուցվում, եթե այլ բան նախատեսված չէ սույն Պայմաններում:
- դ. ԿՄ կարող են օգտագործվել միայն Առաջնային Քարտատիրոջ կողմից: Համաձայն լիազորագրի հանդես եկող Քարտի օգտագործման իրավունք ունեցող երրորդ անձինք չեն կարող փոխանակել/մարել Միավորներ:
- ե. Ցանկացած Ապրանք, փոխանակումից հետո ենթակա չէ վերադարձման.
- զ. Որոշ Ապրանքներ կարող են տրամադրվել Ծրագրին մասնակից մատակարարների կողմից սահմանված հատուկ պայմաններով, ժամկետներում, բացառություններով և սահմանափակումներով, այդ թվում՝ տարածքային

և/կամ ժամկետային սահմանափակումներով, ինչպես նաև որոշակի վճարներ ու ծախսեր կարող են չընդգրկվել փոխարկվող Ապրանքի պայմանների մեջ և այդպիսի վճարներն ենթակա են վճարման բացառապես Քարտատիրոջ կողմից:

5. Կոնվերս Միավորների ամփոփում և ստուգում

Ձեր Հաշվի քաղվածքի համապատասխան հատվածը կամ ՄԿՀ առանձին քաղվածքը ցույց է տալիս Ձեր կատարած գործարքների դիմաց շնորհված ԿՄ-ը և համապատասխան հաշվեկշիռը (Միավորների ամփոփումը): Դուք պետք է անմիջապես ստուգեք Ձեր Միավորների ամփոփումը և դրանում արտացոլված բոլոր մուտքերը/ելքերը ու մնացորդները: Եթե քաղվածքի օրվանից հետո 30 օրվա ընթացքում մեզ գրավոր ձևով չեք ներկայացնում Միավորների ամփոփման մեջ հայտնաբերված սխալների կամ թերությունների մասին, ապա մենք իրավասու ենք Միավորների ամփոփման մեջ արտացոլված մուտքերն ու մնացորդները դիտարկել որպես վերջնական, ճշգրիտ և հաստատված Ձեր կողմից:

6. Ապրանքներ

Բոլոր Ապրանքները տրամադրվում են Բանկի հետ համագործակցող մատակարարների կողմից՝ վերջիններիս սահմանած կանոնների, սահմանափակումների և պայմանների հիման վրա: Մենք իրավունք ունենք ցանկացած պահի մասամբ կամ ամբողջովին փոփոխել կամ անվանացանկից հանել ցանկացած Ապրանք՝ զետեղելով համապատասխան տեղեկատվություն Բանկի Կայքում, որը կհամարվի պատշաճ ծանուցում:

7. Մատակարարներ

Ծրագրին մասնակից մատակարարի հետ Բանկը համագործակցում է պայմանագրի հիման վրա: Ծրագրում ներկայացված Ապրանքների որակի, տեսքի, քանակների և այլնի վերաբերյալ պատասխանատվություն է կրում մատակարարը: Բոլոր Ապրանքները ենթարկվում են մատակարարի կողմից սահմանված տրանսպորտային և/կամ այլ՝ այդ թվում ուղեբեռի տեղափոխման ծառայություններ մատուցողների պայմաններին, բացառություններին և պատասխանատվության սահմանափակումներին: Բանկը պատասխանատվություն չի կրում Ծրագրին մասնակից մատակարարին ներկայացված և/կամ փոխանակված կեղծ Կուպոնների համար:

Ծրագրին մասնակից մատակարարներ կարող են ցանկացած պահին՝ իրենց հայեցողությամբ, միանալ Ծրագրին կամ դուրս գալ Ծրագրից՝ այդ մասին Բանկին նախապես պատշաճ ծանուցում ուղարկելով:

8. Ապրանքներ փոխանակումը ԿՄ-ով

Ցանկացած Ապրանք, որը թվարկված է Բանկի www.conversebank.am պաշտոնական կայքում հասանելի է փոխանակման՝ Բանկին դիմելու պահին: Եթե որևէ ապրանք ժամանակավորապես հասանելի չէ որոշակի պատճառներով, ապա Ձեզ տեղեկացվում է այն հասանելի լինելու ժամկետի վերաբերյալ կամ օգտագործված Միավորները վերամուտքագրվում են Ձեր ՄԿՀ-ին:

Ստացած ապրանքները կարող են տարբերվել ցուցադրված ապրանքներից՝ արտադրողների կողմից մոդելների փոփոխության կամ ցուցադրված ապրանքների սահմանափակ քանակության պատճառով:

- i. Դուք կարող եք ընտրել Ապրանքները Կատալոգից և դիմել փոխանակման Բանկի գլխավոր գրասենյակ կամ Բանկի ցանկացած Մասնաճյուղ:
- ii. Յուրաքանչյուր Ապրանք ենթարկվում է Բանկի կամ մատակարարի կողմից սահմանված պայմաններին:
- iii. ԿՄ-ի փոխանակման դիմում ներկայացնելու դեպքում Բանկի կողմից Ձեզ կտրամադրվի Կուպոն որի հիման վրա Դուք կարող եք կատարել Ձեր կողմից ընտրված Ապրանքի ձեռքբերումը և անմիջապես Ձեր ՄԿՀ-ից կկատարվի ԿՄ համապատասխան քանակի նվազեցում:
- iv. Կուպոնի հիման վրա Ապրանքները կարող են տրամադրվել կամ Բանկի կամ Ծրագրին Մասնակից մատակարարի կողմից, ինչի մասին Կատալոգի ընտրված ապրանքի վերաբերյալ մասում կլինի համապատասխան նշում:
- v. Կուպոնը ունի վավերականության ժամկետ՝ 2 աշխատանքային օր, որի ընթացքում այն պետք է փոխանակվի Ապրանքով, հակառակ դեպքում այն համարվում է անվավեր:
- vi. Անվավեր Կուպոնը յոթ օրվա ընթացքում այն տրամադրող Մասնաճյուղ ներկայացնելու դեպքում Ձեր ԿՄ կվերականգնվեն Ձեր ՄԿՀ-ին, հակառակ դեպքում ԿՄ համարվում են վերջնական մարված:
- vii. Կուպոնը բաղկացած է երկու մասից՝ առաջին մասը լրացվում և վավերացվում է այն տրամադրման պահին, երկրորդը՝ Ապրանքի հետ փոխանակման պահին:
- viii. Եթե Ապրանքը տրամադրվում է Բանկի կողմից, ապա այն պետք է ներկայացվի Բանկի Գլխավոր Գրասենյակ, որը և կտրամադրվի ընտրված Ապրանքը (որոշ դեպքերում, որպես կանոն Երևան քաղաքից դուրս Մասնաճյուղերի դեպքում, Քարտապանը կարող է դիմել Կուպոնը տրամադրող Մասնաճյուղին Ապրանքը այդ Մասնաճյուղից ստանալու համար):
- ix. Եթե Ապրանքը տրամադրվում է Ծրագրի մասնակից մատակարարի կողմից ապա Կուպոնը պետք է ներկայացվի կուպոնում նշված հասցեում գտնվող մասնակցի գրասենյակ:
- x. Փոխանակման ընթացքում արգելվում է՝
- xi. Կատարված փոխանակումը վերջնական է և չի կարող հետադարձ փոխանակման ենթարկվել:

9. Ծրագրի մասնակցության դադարեցում կամ կասեցում

- ա. Ծրագիրն առաջարկվում է մեր կողմից՝ առանց նախապես որոշված վերջնաժամկետի: Մենք կարող ենք ցանկացած պահի կասեցնել կամ դադարեցնել Ծրագիրը մասամբ կամ ամբողջովին՝ առանց հիմնավորման կամ ծանուցման:
- բ. Մենք կարող ենք առանց ծանուցման կասեցնել կամ դադարեցնել Ձեր մասնակցությունը Ծրագրին, կասեցնել Ձեր ՄԿՀ և չեղյալ համարել Ձեր Միավորները՝ (ա) կեղծիքի, (բ) Ծրագրով շնորհված արտոնությունների չարաշահման կամ (գ) սույն Պայմանների խախտման դեպքում:

- զ. Եթե որևիցե հիմքով մենք կասեցրել ենք Ձեր Հաշիվը, ապա Ձեր Միավորները նույնպես ավտոմատ չեղյալ են համարվում առանց ծանուցման և հետագայում չեն կարող մարվել, փոխանցվել կամ փոխանակվել:
- դ. Ձեր կողմից Ծրագրին մասնակցությունը դադարեցնելու կամ Ձեր Պայմանագիրը լուծելու դեպքում, Ձեր մասնակցությունը դադարում և ՄԿՀ վրա հավաքված Միավորները ինքնաբերաբար չեղյալ են համարվում առանց ծանուցման, և հետագայում չեն կարող մարվել, փոխանցվել կամ փոխանակվել:

10. Ծրագրի և սույն Պայմանների փոփոխությունները

Մենք կարող ենք ցանկացած պահի փոփոխել Ծրագրին ու սույն Պայմանները՝ առանց ծանուցման: Ծրագրի փոփոխությունները կարող են առանց սահմանափակման ներառել հետևյալ փոփոխությունները.

- (ա) Պարզև(ներ)ը և տրամադրման կարգը,
- (բ) Պարզևի համար մարման ենթակա ԿՄ քանակը,
- (գ) հատուկ բնույսային Միավորների առաջարկը,
- (դ) Միավորների հաշվարկման բանաձևը:

Ցանկացած փոփոխության վերաբերյալ Դուք կարող եք տեղեկություն ստանալ www.conversbank.am կայք էջից:

11. Պատասխանատվությունից ազատում

Սույնով Դուք համաձայն եք, որ Բանկը չի կրում պատասխանատվություն և , որ Բանկը ազատված է որևիցե պատասխանատվությունից, որը կարող է առաջանալ հետևյալ դեպքերում.

- ա. Միավորների անթույլատրելի փոխանակում/մարում,
- բ. Ապրանքների տրամադրման կամ առաքումների ուշացում, կամ Ապրանքների (այդ թվում նաև՝ նվեր-քարտերի, տոմսերի) կորուստ կամ գողություն,
- գ. Միավորների ամփոփման տեղեկանքի չտրամադրում,
- դ. Կատալոգ(ներ)ում և Ապրանքների վերաբերյալ տեղեկատվության վերաբերյալ այլ աղբյուրներում սխալների կամ բացթողումների առկայություն,
- ե. Որևէ պատճառով Ծրագրի ամբողջական կամ մասամբ կասեցում կամ դադարեցում,
- զ. Ծրագրին Ձեր մասնակցության կասեցում կամ դադարեցում, Ձեր հաշվի փակում կամ Ձեր բոլոր կամ որոշակի քանակությամբ Միավորների չեղյալ համարում կամ անվավեր ճանաչում,

է. Ապրանքի տրամադրողի կողմից պարտականությունների չկատարում կամ հետաձգում:

12. Հարկային պարտավորություն

Բանկը իրավունք ունի պահանջել Ձեզանից Միավորների փոխանակման և Ապրանքների ստացման առնչությամբ ծագած հարկային պարտավորությունների կատարումը: Դուք ընդունում եք, որ մենք չենք տրամադրում հարկերի վճարման մասին տեղեկանքներ:

Ճանապարհորդական ծառայություններ մատուցողների և այլ անձանց կողմից Ձեր ուղևորության կազմակերպման կապակցությամբ գանձվող հարկերի և այլ ծախսերի վճարումը հանդիսանում է Ձեր պատասխանատվությունը, ընդ որում՝ դրանք կարող են ցանկացած պահի փոփոխվել առանց ծանուցման՝ նույնիսկ ուղևորության հետ կապված բոլոր հաստատումները ստանալուց հետո:

Եթե Բանկը կատարել է նման վճարումներ և այն ենթակա է փոխհատուցման Ձեր կողմից, ապա Բանկը իրավունք ունի գանձել համապատասխան գումարները Բանկում առկա Ձեր ցանկացած հաշվից:

13. Երրորդ անձինք

Ապրանքներ մատակարարողները անկախ կողմեր են և չեն հանդիսանում Բանկի կամ նրա հետ փոխկապակցված կամ դուստր կազմակերպությունների գործակալներ, աշխատողներ կամ ներկայացուցիչներ: Բոլոր փաստաթղթերը, ստացականները, տոմսերը, նախնական պատվերները, ապրանքները և/կամ ծառայությունները տրամադրվում են մատակարարների կողմից սահմանված պայմանների համաձայն:

14. Տեղեկատվության փոխանակում

Մենք կարող ենք տրամադրել Ծրագրի շրջանակներում Ձեզ վերաբերող տեղեկատվություն Ծրագրի շրջանակում Բանկի հետ համագործակցող անձանց՝ օրինակ Ծրագրին մասնակից գործընկերների, վաճառողների կամ ծառայություն մատուցողներին Ծրագրի կառավարման և մարման դիմումները բավարարելու նպատակով:

15. Վեճերի լուծում

Ծրագրի հետ կապված բոլոր հարցերը կամ վեճերը և սույն Պայմանների մեկնաբանության հետ կապված տարակարծությունը լուծվում են մեր կողմից և մեր հայեցողությամբ:

16. Լեզուն

Կողմերի պահանջով, սույն Պայմանները և դրանց հետ կապված բոլոր փաստաթղթերը կազմվում են հայերեն լեզվով: